



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

**ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԵՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՈՒՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

Արդյունավետ ջրամատակարարում Առատաշեն գյուղում. ամփոփում ենք դրական արդյունքները



Մանկապարտեզի երեխաները ճաշից առաջ լվանում են ձեռքերը:

Լուսանկարի հեղինակ՝ ԳԱՏՕ ծրագիր

Այն հարցին, թե գոհ են արդյոք ծրագրի արդյունքներից, գյուղի մանկապարտեզի տնօրեն Նվարդ Խաչատրյանը պատասխանեց. «Այնպիսի թեթևություն է, որ արդեն ունենք կայուն ջրամատակարարում: Պատկերացրեք միայն, թե որքան ջուր է ամեն օր օգտագործվում մանկապարտեզում ճաշ եփելու, լվանալու և մաքրելու համար: Նախկինում մեծ դույլերով ջուր էինք հավաքում՝ այդ կարիքները հոգալու համար»:

Ջուրը կյանքի համար ունի կարևորագույն նշանակություն: Հայաստանի Արարատյան դաշտի գրեթե 30 համայնքներում կա խմելու և ոռոգման ջրի սակավության խնդիր: ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցության շնորհիվ Առատաշեն համայնքի 3200 բնակիչներն ապահովվեցին շուրջօրյա հուսալի ջրամատակարարմամբ:

ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ (Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության) ծրագիրը նշված համայնքում իրականացրեց ենթակառուցվածքների բարելավման լայնածավալ ծրագիր, մասնավորապես, նոր պոմպակայանի տեղադրում, 10 կմ մաշված խողովակների փոխարինում, ջրաչափական համակարգի ներդրում: Ջուրն արտեզյան հորից հանվում է պոմպամղման եղանակով և մաքրվելուց հետո մատակարարվում բնակիչներին: Այն ապահով է խմելու և կենցաղային նպատակներով օգտագործման համար:

2019թ.-ի հունիսից Առատաշեն համայնքում բարեհաջող շահագործվում է ջրամատակարարման նոր համակարգը: **2019թ.-ի հուլիս-սեպտեմբեր ամիսների արդյունքները ցույց տվեցին, որ համայնքի էլեկտրաէներգիայի և պոմպամղման ծախսը համարյա եռապատիկ նվազել է՝ համեմատած 2018թ.-ի նույն ժամանակաշրջանի հետ (2.2 մլն. դրամից դարձել 727,779):** Գյուղապետը հաստատեց, որ անցյալում ստիպված են եղել երեք պոմպ շահագործել, սակայն շուրջօրյա ջրամատակարարում այդպես էլ չեն կարողացել ապահովել: Արդյունքները ցույց են տալիս, որ նախկինում կրկնակի անգամ ավելի ջրամատակարարում է իրականացվել՝ ցանցից ջրի հսկայական կորուստների և համակարգի անարդյունավետ շահագործման պատճառով:

«Անցյալի հետ նույնիսկ չի կարելի համեմատել: Նախկինում ջուր ունեցել ենք օրական կամ օրը մեջ մի քանի ժամով: Անկասկած, պատրաստ ենք վճարել, քանի որ հիմա ունենք մշտական ջուր», - նշեց Առատաշեն համայնքի բնակիչ, տնային տնտեսուհի Լենա Եգորյանը:

Էսպես ավելացել են համայնքի բնակիչների կողմից ջրի վճարումները, այդ թվում՝ 1,5 մլն. ՀՀ դրամի չափով հին պարտքերի վճարումը: 2019թ.-ի հուլիս-սեպտեմբեր ամիսներին համայնքի տեղական բյուջեն լցվել է մոտ 3 մլն դրամով: Արդյունքում համայնքը կարողացել է տեղադրել լրացուցիչ 1800 մ խողովակաշար՝ մնացած երեք փողոցների 47 տնային տնտեսություններին ջրամատակարարմամբ ապահովելու համար:

ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ և PURE ծրագրերի համատեղ ջանքերի, ինչպես նաև համայնքի կողմից ծրագրի իրենց մասը կատարելու հանձնառության շնորհիվ Առատաշեն համայնքն ապահովվեց հուսալի և ապահով ջրամատակարարմամբ: Գյուղական բնակավայրերի ծրագրերը կայուն են, եթե համայնքները պատրաստ են իրենց վրա կրել ենթակառուցվածքի պատշաճ պահպանման և ծրագրի շարունակականության ապահովման պատասխանատվությունը:

